ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

21 ապրիլի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

49
(3258)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՎԱՐԿՈՎ ՏՈՒՆ Է ԳՆԵԼ, ԲԱՅՑ ՏՈՒՆԸ ՉԿԱ

Լիլիթ Մակունցը, ով համարվում է Նիկոլ Փաշինյանի քաղաքական հենասյուներից մեկը, առանցքային դեր ունի ինչպես ներքաղաքական, այնպես էլ արտաքին հարաբերությունների համատեքստում: Վկայություններից մեկն այն է, որ ՔՊ 8-րդ արտահերթ համաժողովի ընթացքում հենց նրան էր վերապահվել առաջին ելույթի իրավունքը՝ ի տարբերություն Ազգային Ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի, որը ինստիտուցիոնալ առումով հանրապետության երկրորդ դեմքն է, բայց նա Մակունցից հետո խոսեց:

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել եւ վերլուծել է նրա վերջին տարիների պաշտոնական հայտարարագրերը՝ պարզելու նրա գործունեության ուղղություններն ու գույքային վիճակի փոփոխությունները տարբեր ժամանակահատվածներում:

«Ժողովուրդ» օրաթերթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարբեր տարիներին Մակունցի հայտարարագրերում արձանագրվել են ինչպես զգալի եկամուտներ, այնպես էլ մեծածավալ վարկային պարտավորություններ՝ հիմնականում բնակարանային նպատակներով, այն դեպքում, երբ առանձին անշարժ գույք չի հայտարարագրվել: Ում համար է նա անշարժ գույքի հիփոթեքի վարկ մարում՝ անհասկանալի է, քանի որ հայտարարագրված անշարժ գույք չկա, փոխարենը կա վարկ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ArmLur.am-ը ուսումնասիրել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի 2025 թվականի հաշվետվությունը, համաձայն որի՝ քրեակատարողական հիմնարկներում վատ վերաբերմունքի, ոչ պատշաճ պայմանների եւ քրեական ենթամշակույթի ազդեցության խնդիրները շարունակում են մնալ լուրջ մտահոգության առարկա: Հաշվետվության 5.15-րդ բաժնում արձանագրվում է, որ ազատությունից զրկված անձանց նկատմամբ վերաբերմունքի հարցը միայն առանձին դեպքերի խնդիր չէ, այլ համակարգային բնույթ ունի: ՄԻՊ-ը նշում է, որ ազատությունից զրկված անձանցից ստացվող բողոքները վերաբերում են թե՛ վարչակազմի գործողություններին, թե՛ այլ ազատազրկվածների կողմից ճնշումներին ու ոչ ֆորմալ հարաբերություններին: Հաշվետվությունում առանձնացվում է, որ քրեական ենթամշակույթի ազդեցությունը շարունակում է պահպանվել քրեակատարողական միջավայրում, իսկ դրա հետեւանքները դրսեւորվում են ինչպես կենցաղային հարաբերություններում, այնպես էլ անվտանգության ու մարդու արժանապատվության պաշտպանության հարցերում:

⇨ *էջ 2*



Գլխավոր դատախազությունը տեղեկացրել էր, որ Հակակոռուպցիոն դատարանի 2026 թվականի հունվարի 23-ի վճռով բավարարվել է Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության հերթական հայցը: Վճռով հօգուտ Հայաստանի Հանրապետության կբռնագանձվի 297 միլիոն 980 հազար դրամ: Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունը հայց էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սերժ Սարգսյանի եւ ֆիզիկական անձի միջեւ 2005 թվականի դեկտեմբերի 17-ին կնքված՝ Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի Ծովակալ Իսակով պողոտայում գտնվող՝ 1.4514 հա մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիրը: Դատարանը, բավարարելով Գլխավոր դատախազության հայցը, անվավեր է ճանաչել առուվաճառքի պայմանագիրն ու, որպես պայմանագրի անվավերության հետեւանք, վճռել՝ ֆիզիկական անձից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել հողամասի արժեքը՝ 297 միլիոն 980 հազար դրամ: Վճիռը մտել է օրինական ուժի մեջ, տրամադրվել է կատարողական թերթ:



«Քանի որ բազմաթիվ հարցեր ստացանք, թե ինչու է Բագրատ Սրբազանը հրաժարվել Սուրբ Հաղորդությունից, ցանկացանք պարզաբանում տարածել»: Այս մասին գրված է Բագրատ Սրբազանի ֆեյսբուքյան էջում. «Բանն այն է, որ ՀՀ Արդարադատության նախարարության ապօրինի որոշմամբ արգելվել է Հայոց Եկեղեցու կողմից նշանակված եկեղեցականների մուտքը ազատազրկման վայրեր: Շրջանցելով Մայր Աթոռը եւ անտեսելով իրավական կարգավորումները՝ անհատ եկեղեցականների հետ կնքվել են աշխատանքային պայմանագրեր: Ջինված ուժերից գնդերեցներին հեռացնելուց հետո սա հաջորդ քայլն է՝ պետական կառույցների եւ Մայր Աթոռի համագործակցությունը դադարեցնելու: Հիշեցնենք, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ ՀՀ Արդարադատության նախարարության միջեւ կա կնքված պայմանագիր քրեակատարողական հիմնարկներում հոգեխնամ ծառայություն մատուցելու համար: Վերագրյալի պատճառով՝ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը նման որոշում է կայացրել»:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԻՆՉ ԱՐԵՑԻ, ԻՆՉ ՉԷՐ ՍԱՔՈՒՄ, ԶՂՋՈՒՄ ԵՄ»

Գյումրու ավագանու ՔՊ խմբակցության ղեկավար, Հայաստանի էլեկտրական ցանցերի Շիրակի մարզի «Ղարս» մասնաճյուղի տնօրեն Սարիկ Մինասյանը ֆեյսբուքյան իր էջում տեսանյութ է հրապարակել «Վարչաբենդի» համերգից, որտեղ հայհոյում է խաղաթացիներին: Տեսանյութի տակ խաղաթացիները կարծիքներ են հայտնել, ինչին ի պատասխան՝ Մինասյանը հայհոյել է եւ վիրավորել օգտատերերին:

ArmLur.am-ը կաղ հաստատեց Սարիկ Մինասյանի հետ՝ հասկանալու համար, թե ինչու էր հայհոյանքներ հնչեցնում խաղաթացիների հասցեին:

- Պարոն Մինասյան, երեկ Դուք Ձեր սոցէջում վիրավորական եւ հայհոյախառը արտահայտություններ էիք հնչեցնում այն քաղաքացիների հասցեին, որոնք «Վարչաբենդի» համերգի մասին վատ մեկնաբանություններ էին հրապարակում: Ինչո՞ւ եք թիրախավորում քաղաքացիներին եւ հայհոյախառը արտահայտություններ հնչեցնում:

- Կներեք, բայց ես չեմ հարձակվել, ֆեյք էջերով հարձակվել էին իմ գրառման տակ՝ վատ մեկնաբանություններ թողնելով: Տեսնելով, որ իմ հրապարակած տեսանյութը մեծ տարածում է գտնում եւ հավանության արժանանում, սկսեցին ֆեյք էջերով վատ մեկնաբանություններ գրել:

- Բայց պաշտոնյան պետք է զուսպ լինի եւ կարողանա հարգել քաղաքացիների կարծիքը, ինչո՞ւ էիք հայհոյանքներ հնչեցնում:

- Այո՛, ճիշտ եք, ուղղակի մեր մենտալիտետով հայ տղամարդը երբեմն սառնասիրտ չի կարողանում լինել, եւ արձագանքը վատն է ստացվում:

- Զղջո՞ւմ եք Ձեր արածի համար:

- Այո՛, իհարկե: Քիչ հետո ես հայտարարությամբ հանդես կգամ: Ուղղակի իրենց գրածների համեմատ իմ գրածը կարելի է հայհոյանք չհամարել: Բնականաբար, ինչ արեցի, ինձ չէր սազում, ներողություն եմ խնդրում բոլոր այն մարդկանցից, ովքեր չպետք է կարդային այդ ամենը, ուղղակի բարկացնում է նաեւ այն, որ թիրախավորում են ոչ միայն քեզ, այլեւ քո ընտանիքը, քո հարազատներին: Դրա համար սադրանքին տրվում ես, որը, բնականաբար, չպետք է լինի:

- Նախընտրական ժամանակահատված է, մթնոլորտը՝ լարված, այսինքն՝ պետք է ամեն օր նման իրավիճակի՞ ականատես լինի հանրությունը:

- Ո՛չ, ես կոչ եմ անում բոլորին, քաղաքական նկատառումներից ելնելով, իրենց հակառակորդներին չթիրախավորել, սա չդարձնել ամենօրյա խնդիր:

- Հեռացրե՞լ եք մեկնաբանությունները:

- Այո՛, հեռացրել եմ, իրենք ավելի վատ բառեր են գրում, գրում են, հետո փոխում իրենց գրառումը՝ դրանով սադրելով մեզ:

Զրուցեց՝ ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՌԻՍԿԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՄՆԱԼ ՍՈՒՐ

ArmLur.am-ը ուսումնասիրել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի 2025 թվականի հաշվետվությունը, համաձայն որի՝ իրեական-տարողական հիմնարկներում վատ վերաբերմունքի, ոչ պատշաճ պայմանների եւ իրական ենթամշակույթի ազդեցության խնդիրները շարունակում են մնալ լուրջ մտահոգության առարկա:



Հաշվետվության 5.15-րդ բաժնում արձանագրվում է, որ ազատությունից զրկված անձանց նկատմամբ վերաբերմունքի հարցը միայն առանձին դեպքերի խնդիր չէ, այլ համակարգային բնույթ ունի:

ՄԻՊ-ը նշում է, որ ազատությունից զրկված անձանցից ստացվող բողոքները վերաբերում են թե՛ վարչակազմի գործողություններին, թե՛ այլ ազատազրկվածների կողմից ճնշումներին ու ոչ ֆորմալ հարաբերություններին: Հաշվետվությունում առանձնացվում է, որ քրեական ենթամշակույթի ազդեցությունը շարունակում է պահպանվել քրեակատարողական միջավայրում, իսկ դրա հետեւանքները դրսեւորվում են ինչպես կենցաղային հարաբերություններում, այնպես էլ անվտանգության ու մարդու արժանապատվության պաշտպանության հարցերում:

Փաստաթղթում ուղիղ նշվում է, որ «քրեական ենթամշակույթի ազդեցությունը պահպանվում է», իսկ դրա դեմ պայքարը դեռեւս ամբողջությամբ արդյունավետ չէ: Միաժամանակ ընդգծվում է, որ խնդիրը վերաբերում է ոչ միայն ֆորմալ իրավակարգավորումներին, այլ նաեւ հիմնարկների ներսում ձեւավորված փաստացի հարաբերություններին:

ՄԻՊ-ը արձանագրել է նաեւ վատ վերաբերմունքի մասին տեղեկությունների ստացման եւ դրանց պատշաճ քննության հարցում թերություններ: Հաշվետվությունում նշվում է, որ առկա են դեպքեր, երբ անձինք վախի, անվստահության կամ հնարավոր հետեւանքների մտավախության պատճառով չեն բարձրաձայնում խնդիրները: Այդ համատեքստում ուշագրավ է ՄԻՊ-ի արձանագրումը, որ «ազատությունից զրկված անձինք կարող են խուսափել բողոք ներկայացնելուց»:

Առանձին անդրադարձ կա նաեւ նյութական եւ կենցաղային պայմաններին: Ըստ հաշվետվության՝ որոշ հիմնարկներում խցային պայմանները, սանիտարահիգիենիկ վիճակը, օդափոխությունը, լուսավորությունը եւ ջերմային ռեժիմը շարունակում են խնդիրներ առաջացնել: ՄԻՊ-ն արձանագրում է, որ նման պայմանները կարող են ոչ միայն վատթարացնել պահման ընդհանուր իրավիճակը, այլեւ նպաստել լարվածության աճին ու ոչ ֆորմալ ճնշումների խորացմանը:

Հաշվետվությունում առանձնահատուկ տեղ է տրված «Արմավիր» քրեակատարողական հիմնարկին: ՄԻՊ-ը նշում է, որ այնտեղ խնդիրները բազմաշերտ են՝ սկսած խցային պայմաններից մինչեւ միջանձնային հարաբերությունների եւ ենթամշակութային ազդեցությունների դրսեւորումներ: Զեկույցում նաեւ նշվում է, որ որոշ դեպքերում ազատությունից զրկված անձինք փորձել են հարմարվել այդ միջավայրին՝ հրաժարվելով բողոքարկման մեխանիզմներից կամ չվստահելով դրանց արդյունավետությանը:

Բացի այդ, հաշվետվության մեջ մատնանշվում է, որ ենթամշակույթի դեմ պայքարի միջոցառումները չեն կարող սահմանափակվել միայն վերահսկողական քայլերով: ՄԻՊ-ը շեշտում է, որ անհրաժեշտ են նաեւ կանխարգելիչ, սոցիալ-հոգեբանական եւ վերասոցիալականացման գործիքներ: Այդ համատեքստում փաստաթուղթը կարեւորում է անձնակազմի դերակատարումը, խոցելի խմբերի առանձնացված պաշտպանությունը եւ ազատությունից զրկված անձանց իրավունքների արդյունավետ երաշխավորումը:

Հաշվետվության այդ մասի եզրահանգումն այն է, որ քրեակատարողական համակարգում վատ վերաբերմունքի եւ քրեական ենթամշակույթի ռիսկերը շարունակում են մնալ բարձր, իսկ առկա մեխանիզմները դեռեւս լիարժեք չեն լուծում խնդիրը: ՄԻՊ-ի գնահատմամբ՝ համակարգում անհրաժեշտ են ոչ թե հատվածական, այլ խորքային փոփոխություններ՝ մարդու արժանապատվության, անվտանգության եւ իրական վերասոցիալականացման ապահովման համար:

ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԿԱՆՑԿԱՑՆԻ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ այսօր՝ ապրիլի 21-ին, «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը «Դվին» հյուրանոցային համալիրում արտահերթ համագումար կանցկացնի:

Ըստ ArmLur.am-ի տեղեկությունների՝ արտահերթ համագումարի օրակարգում ընդգրկված են կուսակցության օրակարգի հաստատումը, «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի առաջին երեք տասնյակ թեկնածուների հաստատումը եւ առաջադրման մասին որոշումը:

Հիշեցնենք, որ ապրիլի 8-ին հայտնի դարձավ նաեւ, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության անցկացված համագումարում հաստատվել են նախընտրական ցանկի առաջին 30 թեկնածուները: Առաջին յոթնյակն ունի հետեւյալ տեսքը.

Նարեկ Կարապետյան
Արամ Վարդեւանյան
Գոհար Մելոյան
Դավիթ Ղազինյան
Ռուբեն Մխիթարյան
Արեգա Հովսեփյան
Մամիկոն Ասլանյան:

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ

Ապրիլի 20-ին տեղի է ունեցել «Միասնության թեւեր» կուսակցության արտահերթ համագումարը: Համագումարը կայացրել է որոշում՝ հաստատելու «Միասնության թեւեր» կուսակցության ընտրական ցուցակի առաջին երեք տասնյակում ներառված պատգամավորի թեկնածուների անուններն Ազգային Ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրություններին մասնակցելու նպատակով:

«Միասնության թեւեր» կուսակցության ընտրական ցուցակի առաջին երեք տասնյակում ներառված պատգամավորի թեկնածուներն են՝

1 Արման Հակոբի Թաթոյան
2 Դավիթ Սանասարի Անանյան
3 Աստղիկ Համլետի Մատինյան
4 Շահեն Շանթի Հարությունյան
5 Ավետիս Արմենի Ավետիսյան
6 Հասմիկ Աֆթանդիլի Ղազարյան
7 Արմեն Էդվարդի Գալստյան
8 Լիպարիտ Մամիկոնի Դրմեյան
9 Անուշ Ռոստոմի Սեդրակյան
10 Գոռ Հովհաննեսի Թադեւոսյան
11 Լեւոն Հայրապետի Չուկակլյան
12 Ռոզա Համլետի Հարությունյան
13 Վահագն Ֆարհադի Դավիթավյան
14 Արմեն Էդիկի Եղիազարյան
15 Մարինե Նորիկի Հարությունյան
16 Նարեկ Վարդկեսի Պարոնյան
17 Տիգրան Հովիկի Հայրապետյան
18 Սաթինե Վասիլի Գզողյան
19 Նարեկ Էմիլի Բալաբեկյան
20 Վարդան Ստեփանի Փաշայան
21 Անահիտ Սերգեյի Փիլոսյան
22 Հրաչյա Սամվելի Մանուկյան
23 Պարույր Ավետիսի Ալեքյան
24 Ջուլիետա Սամվելի Բաղդասարյան
25 Կարեն Սամվելի Լազարյան
26 Նորայր Սմբատի Աբրահամյան
27 Սաթենիկ Կարենի Աթայան
28 Աշոտ Սուրենի Թովմասյան
29 Շուշան Նորիկի Սարգսյան
30 Սարհատ Վազրիկի Պետրոսյան

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱԺ Է ԳՆՈՒՄ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ ապրիլի 27-ին Ազգային Ժողով է գնալու ՀՀ արտաքին հետախուզության ծառայության պետ Քրիստինե Գրիգորյանը: ArmLur.am-ը տեղեկացավ, որ Գրիգորյանը պետք է ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովում նախագիծ ներկայացնի: Ըստ ArmLur.am-ի տեղեկությունների՝ նախագծերը վերաբերում են արտաքին հետախուզական գործունեությանը եւ արտաքին հետախուզության ծառայությանը, օպերատիվ հետախուզական գործունեությանը, պաշտոնատար անձանց գործունեության ապահովմանն ու սոցիալական երաշխիքներին: Գրիգորյանը հանձնաժողովին առաջարկելու է այս նախագծերում փոփոխություններ եւ լրացումներ կատարել: Նախագծերի հարակից զեկուցող նշանակված է ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը:

ՀՀ–ՈՒՄ ՈՉՆՉԱՑՎԵԼ Է

ՀՀ-ում ոչնչացվել է «Nestle» ընկերության «NAN» ապրանքանիշի մանկական սննդի վտանգավոր ճանաչված 9,700 կգ ընդհանուր քաշով խմբաքանակ, հայտնում են ՍԱՏՄ-ից:

Նշվում է, որ ոչնչացման պատճառը, ըստ Ռուսաստանից ստացված լաբորատոր փորձաքննության արդյունքների, մանկական սննդի չոր, արագ լուծվող, կաթնային եւ կաթնաթթվային խառնուրդների խմբաքանակներում հայտնաբերված վտանգավոր տոքսինի հնարավոր առկայության ռիսկն է:

ԿՄԱՄՆԱԿՑԻ ԵՐԿԲՈՐԴ ՓՈՒԼԻՆ

Իրանը մտադիր է մասնակցել ԱՄՆ-ի հետ բանակցությունների երկրորդ փուլին Պակիստանի մայրաքաղաք Իսլամաբադում ապրիլի 21-ին, չնայած Հորմուզի նեղուցում լարվածությանը: Այս մասին հաղորդում է թուրքական «Անադոլու» լրատվական գործակալությունը՝ հղում անելով բանակցություններին ծանոթ պակիստանյան աղբյուրներին: Նրանց տեղեկությունների համաձայն՝ իրանական պատվիրակությունը կարող է Իսլամաբադ ժամանել ապրիլի 21-ին: Թեհրանն ինքը դեռեւս պաշտոնապես չի հաստատել իր մասնակցությունը բանակցություններին: Իրանի պատվիրակության կազմը կմնա նույնը. այն կգլխավորի խորհրդարանի խոսնակ Մոհամմադ Բաղեր Ղալիբաֆը, իսկ բանակցություններին կմասնակցի նաեւ արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչին: Ամերիկյան պատվիրակության կազմում, հավանաբար, կլինեն ԱՄՆ փոխնախագահ Ջ.Դ. Վենսը, ինչպես նաեւ նախագահի հատուկ դեսպանորդ Սթիվ Ուիթքոֆը եւ ամերիկացի առաջնորդի փեսան՝Ջարեդ Քուշները: Ուիթքոֆը եւ Քուշները կարող են Իսլամաբադ ժամանել երկուշաբթի կամ երեքշաբթի ուշ երեկոյան, մինչդեռ Վենսը կարող է Պակիստանի մայրաքաղաք ժամանել առանձին, հաղորդում է գործակալությունը:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՕԳՆԱԿԱՆԻՑ՝ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ

ArmLur.am-ը ուսումնասիրել եւ վերլուծել է ՔՊ ընտրական ցուցակի 43-րդ հորիզոնականում ընդգրկված Արագածոտնի մարզպետի տեղակալ Միլադա Հովհաննիսյանի կենսագրական տվյալները, աշխատանքային գործունեությունը եւ վերջին տարիների տարեկան հայտարարագրերը՝ պարզելու համար է, թե ով է նա:

Նա «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է եւ 2025 թվականին ընտրվել է ՔՊԿ Աշտարակի տարածքային կազմակերպության խորհրդի անդամ:

Տարեկան հայտարարագրերի համաձայն՝ 2024 թվականին նա ունեցել է Mercedes-Benz մակնիշի ավտոմեքենա (2008թ., ձեռք բերված 2018 թվականին), բանկային հաշիվները կազմել են 1,412 դրամ, կանխիկը՝ 1,300,000 դրամ, ինչպես նաեւ վարկային պարտավորությունները՝ 4,651,440 դրամ: Նրա տարեկան եկամուտները «ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմից» կազմել են ավելի քան 5-6 միլիոն դրամ:

2023 թվականի տվյալներով՝ նրա եկամուտը նույն աշխատակազմից կազմել է 6,423,224 դրամ, բանկային եւ կանխիկ միջոցները համապատասխանաբար եղել են 250,000 եւ 400,000 դրամ:

2023 թվականի տվյալներով եկամուտը նույն աշխատակազմից կազմել է 6,423,224 դրամ, բանկային եւ կանխիկ միջոցները համապատասխանաբար եղել են 250,000 եւ 400,000 դրամ:

2022 թվականին, երբ նա զբաղեցնում էր Արագածոտնի մարզպետի օգնականի պաշտոնը, ստացել է 3,751,914 դրամ՝ մարզպետի աշխատակազմից եւ 599,554 դրամ՝ Ազգային Ժողովից, ընդհանուր՝ 4,351,468 դրամ եկամուտ: Այդ ժամանակ նրա բանկային հաշվին եղել է 150,000 դրամ, կանխիկ՝ 300,000 դրամ:

2021 թվականի հայտարարագրով ունեցել է 300,000 դրամ բանկային մնացորդ, 500,000 դրամ կանխիկ գումար եւ 330,000 դրամ եկամուտ՝Ազգային Ժողովից:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԻՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է

Իրանը մտադիր չէ ժամանակ վատնել Միացյալ Նահանգների հետ անիմաստ բանակցությունների վրա եւ ակնկալում է, որ Վաշինգտոնը կպարզաբանի իր դիրքորոշումը, հայտարարել է Իսլամական Հանրապետության խորհրդարանի (Մեջլիս) ազգային անվտանգության կոմիտեի ղեկավար Էբրահիմ Ազիզին: «Մենք որեւէ մտահոգություն չունենք բանակցային գործընթացին մեր մասնակցության վերաբերյալ: Սակայն մենք չենք ընդունում բանակցությունների ժամանակ վատնելու նպատակով: Բանակցությունները պետք է հանգեցնեն Իրանի համար շոշափելի եւ հստակ արդյունքների: Սակայն ամերիկյան կողմը մինչ օրս չի կարողացել հստակ սահմանել իր դիրքորոշումը այս բանակցություններում», - նշել է նա Al Jazeera հեռուստաալիքին տված մեկնաբանության մեջ:

ԶԵԼԵՆՍԿՈՒ ՆՈՐ ՔԱՅԼԸ

Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին կարող է փորձել երկրի նավատորմի որոշ նավեր տրամադրել միջազգային առաքելությանը՝ ապահովելու նավարկության անվտանգությունը Հորմուզի նեղուցում: Այս մասին հայտարարել է Գերագույն ռադայի պատգամավոր Ալեքսանդր Դուբինսկին՝նշելով, որ տեսականորեն հնարավոր է նավերը վարձակալության տալ դաշինքին՝նույնիսկ անձնակազմի հետ միասին: Դուբինսկու խոսքով՝ Ուկրաինան չունի ծովային ականազերծման անհրաժեշտ տեխնոլոգիաներ, իսկ հարվածային դրոնները այս իրավիճակում կիրառելի չեն: Փոխարենը, ըստ նրա, կարելի է օգտագործել այն նավերը, որոնք ներկայումս դուրս են բերված եւ գտնվում են Թուրքիայում՝ դրանք տրամադրելով ՆԱՏՕ-ին՝ առանց դաշինքի երկրների ռազմական նավերը վտանգի ենթարկելու:

Պատգամավորը նաեւ ընդգծել է, որ նման քայլը կարող է ձեւավորել Ուկրաինայի կերպարը որպես «վարձու ռազմական ծառայություններ տրամադրող պետություն» միջազգային հարթակում: Միաժամանակ, նախկին Կենտրոնական հետախուզական վարչություն-ի աշխատակից Սքոթ Ռիտերը հայտարարել է, որ ԱՄՆ-ը պարտություն է կրել Իրանի հետ դիմակայությունում՝ չկարողանալով վերահսկել Հորմուզի նեղուցը եւ հասնել իշխանափոխության Իսլամական Հանրապետությունում:

ԱՎԵԼԻ ՔԱՆ 20 ՆԱՎ

Ապրիլի 18-ին Հորմուզի նեղուցով անցել է ավելի քան 20 նավ՝ սահմանելով ռեկորդ մարտի 1-ից ի վեր, հաղորդում է Reuters-ը՝ հղում անելով Kpler վերլուծական ընկերության տվյալներին: Ըստ ընկերության՝առնվազն հինգ նավ բեռնված է եղել Իրանում, այդ թվում՝ նավթամթերքներով եւ մետաղներով: Դրանցից երեքը տեղափոխում էին հեղուկ բնական գազ (LNG), մեկը՝ Չինաստան, իսկ մյուսը՝ Հնդկաստան: Նավերի մեծ մասը բեռնված էր Պարսից ծոցի երկրներից, այդ թվում՝ Արաբական Միացյալ Էմիրություններից (ԱՄԷ), Սաուդյան Արաբիայից եւ Բահրեյնից եկող էներգիայով: Օրինակ՝ Բահրեյնից նավթ տեղափոխող մեկական տանկեր ուղեւորվում էր Թաիլանդ եւ Մոզամբիկ, իսկ մյուսը՝ ԱՄԷ-ից Ինդոնեզիա LNG տեղափոխող մեկական տանկեր: Երկու այլ տանկերներ կրում են Լիբերիայի դրոշը. մեկը ԱՄԷ-ից Կորեայի Հանրապետություն է տեղափոխում մոտ 500,000 բարել նավթ, իսկ մյուսը՝ Սաուդյան Արաբիայից Թայվան: Հնդկաստանի դրոշի ներքո նավարկող տանկերը, որը բեռնված է ԱՄԷ-ից մոտ 780,000 բարել նավթով, ուղեւորվում է Շրի Լանկա: Կպլերի կողմից հիշատակված նավերի թվում են նաեւ Սաուդյան Արաբիայից Իտալիա ուղեւորվող նավթային կոկոս տեղափոխող բեռնատար նավը եւ Կատարից ԱՄԷ ուղեւորվող պարարտանյութ տեղափոխող նավը:

ՉԻ ՃԱՆԱՉՈՒՄ ՎԵՐՋՆԱԳՐԵՐԸ

Թեհրանը չի ճանաչում ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի վերջնագրերը եւ վճռականորեն կարձագանքի հետագա ագրեսիայի դեպքում, հայտարարել է Իրանի արտաքին գործերի նախարարության խոսնակ Էսմայիլ Բաղային: «Իրանի Իսլամական Հանրապետությունը չի ճանաչում իր ազգային շահերի պաշտպանության վերաբերյալ որեւէ վերջնագիր: Ազգային շահերի պաշտպանությունը կշարունակվի այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է, եւ Միացյալ Նահանգների կամ սիոնիստական ռեժիմի (նկատի ունի Իսրայելը) կողմից որեւէ նոր արկածախնդրության դեպքում զինված ուժերը կտան հզոր պատասխան», - ասել է նա մամուլի ասուլիսի ժամանակ: Ապրիլի 19-ին ամերիկացի առաջնորդը հայտարարեց, որ երկուշաբթի օրը ԱՄՆ պատվիրակությունը կժամանի Իսլամաբադ՝ Իրանի հետ բանակցություններ վարելու համար: Նա նաեւ սպառնաց, որ ԱՄՆ-ն կոչնչացնի իրանական բոլոր էլեկտրակայաններն ու կամուրջները, եթե Թեհրանը չհամաձայնի Վաշինգտոնի հետ գործարքի:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՈՐ Է ԲԱՆՏԻՑ ՓԱԽՍԱԾ ՄԻՔԱՅԵԼԸ

«ՓՐԿԻՐ ԻՆՁ, ՄԱՅՐԱՍՊԱՆ ՉԴԱՌՆԱՄ»

Ո՞վ է Վարդաշենի բանտից փախուստի դիմած դատապարտյալը եւ ինչի՞ համար է նա հայտնվել բանտում:

Նախ ամենասկզբից

2026 թ. մարտի 22-ի առավոտյան ժամը 07:10-ի սահմաններում «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում հայտնաբերվել էր, որ դատապարտյալներից մեկը բացակայում է: Խոսքը 1995 թ. ծնված Միքայել Մուրադյանի մասին է, որը պատիժը կրում էր մեղմ պայմաններում՝ ցածր անվտանգային գոտում: Մուրադյանը Վայոց ձորի մարզի բնակիչ էր եւ «Վարդաշեն» ՔԿՀ-ում էր գտնվում այս տարվա փետրվարից:

Դատապարտյալին մինչ օրս չեն գտել, ավելին, ըստ տեղեկությունների՝ նա լքել է Հայաստանը:

Ո՞վ է պատասխանատու դատապարտյալի՝ բանտից փախուստի համար եւ առհասարակ բանտից հետո երկիրը լքելու հարցում. իրավապահ համակարգը դեռ լռում է, սակայն դատապարտյալի մասին ArmLur.am-ին որոշ հանգամանքներ են հայտնի դարձել, թե նա ինչու է հայտնվել բանտում:

Միքայել Վարազդատի Մուրադյանը 2023 թ. մայիսի 18-ին՝ ժամը 09:00-ի սահմաններում, գալով իր մոր՝ ք. Երեւան Ազատության պողոտայի 25-րդ շենք 26-րդ բնակարան, ագրեսիվ վարքագիծ է դրսեւորել, գոռալով պահանջել է մորից՝ Անահիտ Հովհաննիսյանից, զանգահարել իր եղբորը՝ Սեւակին, վերջինս հեռախոսազանգերին չի պատասխանել, որից հետո Միքայել Մուրադյանն ավելի է վրդովվել եւ սկսել է սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցնել, տան մեջ անկանոն քայլել, սպառնալով, որ կսպանի, կմորթի Անահիտ Հովհաննիսյանին, վերջինս հորդորել է դադարեցնել հայհոյելը, որից հետո Միքայել Մուրադյանը մոտեցել է Անահիտ Հովհաննիսյանին, մեջբերելով Ռաֆֆու «Սամվել» վեպը՝ նշել է, թե ինչպես է Սամվելը սպանել մորը եւ կրկնել է՝ «Տեր Աստված փրկիր ինձ, որ մայրասպան չդառնամ եւ մեղքի տակ չլինեմ», եւ ձեռքին եղած բաժակով ջուրը լցրել է վերջինիս դեմքին, որից հետո Անահիտ Հովհաննիսյանը, վախենալով այդ ամենից,

զանգահարել է ոստիկանություն, ինչի մասին տեղեկանալով՝ Միքայել Մուրադյանը ներսից բանալիով փակել է բնակարանի դուռը, խոհանոցից վերցրել է դանակները՝ կրկին սպառնալով սպանել, մորթել մորը՝ Անահիտ Հովհաննիսյանին:

Այնուհետեւ ՀՀ ոստիկանության ծառայողների՝ դեպքի վայր հասնելուց հետո հրաժարվել է բացել տան դուռը՝ շարունակելով դանակով սպառնալ Անահիտ Հովհաննիսյանին եւ միայն «Այբ» դպրոցի հոգաբարձուների խորհրդի անդամ Տեր Մեսրոպ քահանայի գալուց հետո բացել է բնակարանի դուռը եւ ոստիկանության աշխատակիցները, մտնելով բնակարան, Միքայել Մուրադյանի ձեռքից վերցրել են դանակները:

Տուժող Անահիտ Հովհաննիսյանը հիմնական դատաքննությունների ժամանակ ցուցմունք տվեց այն մասին, որ դեպքի օրը որդին սուրճ խմելու նպատակով եկել է իր տուն: Սկզբում եղել է հանգիստ: Աչքերը եղել են կարմրած: Դեպքից 2 օր առաջ Միքայելը նամակ էր ստացել Երուսաղեմից, որով մերժել էին նրա Երուսաղեմ մեկնելը: Այդ հանգամանքով պայմանավորված՝ որդին գտնվել է հոգեպես անկայուն վիճակում: Զրույցի ընթացքում Միքայելը լարվածություն է դրսեւորել, մեղադրել է՝ տունը չվաճառելու եւ դրա արդյունքում Երուսաղեմ չմեկնելու մեջ: Սպառնալիքներ եղել են, սակայն դրանք իրատեսական չի համարում: Սեռական բնույթի հայհոյանքներ են եղել, բայց իրեն ուղղված չեն եղել: Ինչ վերաբերում է դանակին, ապա Միքայելն այն վերցրել է սեղանի վրայից խնձորը մաքրելու համար: Դանակով սպառնալիքներ չեն եղել: Տեղյակ է, որ որդին թմրանյութ է օգտագործում: Ոստիկանություն ինքն է զանգել: Նախաքննության ընթացքում իրեն չեն ուղղորդել: Համաձայն չէ դեպքի վայրի զննության արձանագրության բովանդակության հետ՝ բառապաշարն իրենը չէ: Գրքերը դրված են եղել սեղանին, եւ երբ ոստիկանները ձերբակալել են Միքայելին, նրանցից մեկի ոտքը դիպել է սեղանին, ինչի արդյունքում գրքերը թափվել են գետնին: Միքայելը ասել է, որ միայն հոգեւորականի առաջ կբացի տան դուռը:

Արդյունքում դատարանը 2025 թվականի փետրվարի 10-ին որոշում է կայացրել Միքայել Վարազդատի Մուրադյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ, 6-րդ կետերով եւ նրա նկատմամբ պատիժ նշանակել ազատության սահմանափակում 7 (յոթ) ամիս ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ Միքայել Վարազդատի Մուրադյանի նկատմամբ ազատության սահմանափակման ձեւով նշանակված պատժին հաշվակցել սույն քրեական գործով 2023 թվականի մայիսի 18-ից մինչեւ 2023 թվականի հունիսի 6-ը փաստացի անազատության մեջ գտնվելու ժամկետը՝ 20 (քսան) օրը եւ որպես պատիժ թողնել ազատության սահմանափակում՝ 5 (հինգ) ամիս 20 (քսան) օր ժամկետով:

Պատժի կրման ընթացքում Միքայել Վարազդատի Մուրադյանին արգելել՝ առանց իր նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համաձայնության փոխել բնակության վայրը:

Միքայել Մուրադյանը չէր հայտնվի բանտում, եթե ոստիկաններին դիմադրություն ցույց չտար, երբ նրան փորձել են կալանավորների կամ ազատությունից զրկված անձանց համար նախատեսված «բռասլետը» ամրացնել: 1 ամիս էր մնացել, որ հայտնվեր ազատության մեջ, նա դիմեց փախուստի:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԵԿ ԱՅԼ ԱՆՁԻ ՓՈԽԱՐԵՆ

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում իրականացված մեծածավալ վարութային եւ ապացուցողական գործողությունների արդյունքում պարզվել է, որ Ժ.Ս.-ն տեղյակ լինելով, որ Գ.Դ.-ն 2022 թվականի ձմեռային զորակոչին առողջական վիճակով պայմանավորված ոչ պիտանի է ճանաչվել պարտադիր ժամկետային զինվորական ծառայության համար, իսկ Ն.Հ.-ն որդուն՝ Ռ.Խ.-ին զինվորական ծառայությունից վերջնականապես ազատելու ապօրինի նպատակ է հետապնդում, առաջարկել եւ խորհուրդներ տալու եղանակով նախնական համաձայնության է եկել վերջիններիս հետ՝ Ռ.Խ.-ի փոխարեն Գ.Դ.-ի կողմից համապատասխան հետազոտություն անցնելու, փաստաթուղթ կեղծելու եւ այն զինկոմիսարիատ ներկայացնելու եղանակով օգտագործելու վերաբերյալ՝ կազմակերպելով եւ ղեկավարելով նշված հանցանքի կատարումը: Այս մասին տեղեկանում ենք Քննչական կոմիտեից:

Մասնավորապես՝ Ժ.Ս.-ի ցուցումով, 2024 թվականի մայիսի 30-ին Ն.Հ.-ն իր որդու փոխարեն՝Գ.Դ.-ին ուղեկցել է բժշկական կենտրոն, որտեղ վերջիններս ներկայացրել են Ռ.Խ.-ի ծննդյան վկայականը եւ Գ.Դ.-ն նրա փոխարեն անցել է ՄՌՏ հետազոտություն:

Արդյունքում՝ բժիշկը կազմել է կեղծ փաստաթուղթ՝ չգիտակցելով, որ Ռ.Խ.-ի փոխարեն հետազոտության է ենթարկվել Գ.Դ.-ն:

Ռ.Խ.-ն տեղյակ լինելով, որ իր վերաբերյալ կազմված փաստաթուղթը կեղծ է, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու եւ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից վերջնականապես ապօրինի ազատվելու նպատակով այն ներկայացրել է ՀՀ ՊՆ զինկոմիսարիատ, որի հիման վրա վերջինս ճանաչվել է սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար, քանի որ ՀՀ Կառավարության 2024 թվականի ապրիլի 18-ի որոշման ընդունումից հետո նշված հիվանդության առկայությունն այլեւս զորակոչիկին չի ազատում պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից:

Ռ.Խ.-ն տեղյակ լինելով, որ իր վերաբերյալ կազմված փաստաթուղթը կեղծ է, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու եւ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից վերջնականապես ապօրինի ազատվելու նպատակով այն ներկայացրել է ՀՀ ՊՆ զինկոմիսարիատ, որի հիման վրա վերջինս ճանաչվել է սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար, քանի որ ՀՀ Կառավարության 2024 թվականի ապրիլի 18-ի որոշման ընդունումից հետո նշված հիվանդության առկայությունն այլեւս զորակոչիկին չի ազատում պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից:

Ռ.Խ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով (փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր կեղծելը կամ կեղծ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր իրացնելը, պատրաստելը կամ օգտագործելը), Ն.Հ.-ի, Գ.Դ.-ի նկատմամբ՝ 457-րդ հոդվածի 2-րդ մասով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր կեղծելը կամ կեղծ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր իրացնելը, պատրաստելը կամ օգտագործելը), Ժ.Ս.-ի նկատմամբ՝ 46-457-րդ հոդվածի 2-րդ մասով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր կեղծելը կամ կեղծ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր իրացնելը, պատրաստելը կամ օգտագործելը կազմակերպելը): Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ քննության առնելու համար դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ՈՎ Է ՆԱ

ԿԱԼԱՆԱՎՈՐԵԼ ԵՆ

Նիկոլ Փաշինյանի նկատմամբ բռնություն գործադրելու հրապարակային կոչ անելու համար տղամարդ են կալանավորել: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ վերջինս Արմեն Սարգսյան է, որին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ, բռնություն գործադրելու հրապարակային կոչ է հնչեցրել ՀՀ վարչապետի նկատմամբ՝ պայմանավորված իր քաղաքական հայացքներով եւ բռնությունը հրապարակայնորեն արդարացրել է: Վերջինիս նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ տղամարդուն մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 330-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Հոդված 330. Բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, ինչպես նաեւ այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը.

1. Անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչը, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, ինչպես նաեւ այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 136-րդ, 151-րդ 313-րդ, 328-րդ, 329-րդ կամ 422-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր ժամ տեւողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

3) հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործությունների, զանգվածային լրատվության միջոցների կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տեւողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Ք. Մ.

● *Ապրիլի 18-ից 20-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է մարմնական վնասվածք պատճառելու 18 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

50 ԿՈՎ

Տավուշի մարզպետարանը 2024թ.-ին մրցույթ է հայտարարել մարզում 1410 կովերի արհեստական սերմնավորման համար: Մրցույթն անցկացվել էր կառավարության 2024թ. օգոստոսի 22-ի N 1392-Լ որոշմամբ հաստատված՝ «Մթերատվության բարձրացման փորձնական ծրագրի» շրջանակներում: Ծրագրով նախատեսված էր յուրաքանչյուր կովի սերմնավորման համար սերմնավորողին փոխհատուցել 10 հազար դրամ (եւս 5 հազար դրամ վճարում է անասնատերը): Մրցույթին կարող էին մասնակցել այն կազմակերպությունները, որոնք ունեն տվյալ ոլորտում գործունեություն իրականացնելու առնվազն մեկ տարվա փորձ եւ համապատասխան գործունեությամբ զբաղվելու հավաստագիր ունեցող մասնագետներ, նաեւ ունեն հարկային եւ վարկային դրական պատմություն: Հայտերի ընդունման վերջնաժամկետն էր 2024թ. դեկտեմբերի 12-ը: Սակայն մրցույթը չկայացավ, որովհետեւ մասնակիցներ չեղան: Մարզպետարանը նոր մրցույթ հայտարարեց 2025թ. փետրվարին: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում եմ կատարել, թե որ կազմակերպությունն է հաղթել մրցույթում: Մարզպետարանից պատասխանել են. «Պետական աջակցության ծրագրերի շրջանակներում կովերի արհեստական սերմնավորման վերաբերյալ մրցույթում հաղթող է ճանաչվել Ա/Ձ Դավիթ Նավասարդյանը: Պայմանագրի կնքման աշխատանքներն ընթացքի մեջ են»: Հետո մարզպետարանից տեղեկացա, որ Ա/Ձ Դավիթ Նավասարդյանը Տավուշի մարզի 1410 կովերի արհեստական սերմնավորման վերաբերյալ այդպես էլ պայմանագիր չի կնքել, 2025 թվականին Տավուշի մարզում կովերի արհեստական սերմնավորում չի եղել: 2026թ. ապրիլի 10-ին Բերդի համայնքապետարանը հայտարարություն է տվել, որ պետական աջակցությամբ իրականացվող «Մթերատվության բարձրացման փորձնական» ծրագրի շրջանակում Բերդ համայնքի անասնապահությամբ զբաղվող տնտեսվարողների համար ընձեռվում է բացառիկ հնարավորություն, խոշոր եղջերավոր կենդանիների արհեստական սերմնավորման գինը՝ 5 000 դրամ, այդ հնարավորությունից օգտվելու համար անհրաժեշտ է նախօրոք գրանցվել՝ զանգահարելով հայտարարության մեջ նշված հեռախոսահամարներով: Զանգահարեցի Բերդ համայնքի անասնաբույժ Սամվել Նավասարդյանին, նա ասաց, որ Դավիթ Նավասարդյանն իր որդին է: Ս.-Նավասարյանը հայտնեց, որ ծրագիրը ռեակցիոն է իրականացվում՝ էկոնոմիկայի նախարարություն, Բերդի համայնքապետարան եւ ԱՁ: Նա ասաց, որ անասունների արհեստական սերմավորում իրականացնելու են միայն Բերդ համայնքում: Հավելեց, որ արհեստական սերմավորվող ամեն կովի հաշվով պետբյուջեից անհատ ձեռներեցին տրվելու է 10 հազար դրամ, որից 3 հազար դրամն իրենք պետական տուրք են վճարելու: Նախատեսված էր 2025-ին Տավուշում արհեստական սերմնավորել 1410 կով, սակայն դա չարվեց, 2026-ին արհեստական կսերմավորի ընդամենը 50 կով, այն էլ միայն մարզի 4 համայնքներից մեկում՝ Բերդում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԾԱՎԱԼԸ ՄԵԾԱՑԵԼ Է

ԱՃԵԼ Է ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԹԻՎԸ

ArmLur.am-ը ուսումնասիրել է ՀՀ դատախազության գործունեության մասին տարեկան հաղորդումը եւ առանձնացրել «պատիժների եւ հարկադրանքի միջոցների» բաժինը:

ՀՀ գլխավոր դատախազության տարեկան հաղորդման համաձայն՝ 2025 թվականին քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց թիվը հասել է 2396-ի՝ 2024-ի 1850-ի դիմաց: Միաժամանակ, համակարգում հայտնաբերվել է 167 խախտում, կազմվել 69 միջնորդագիր, իսկ ազատությունից զրկված անձանց բուժման եւ պահպանման պետական ծախսերը աճել են՝ հասնելով 2.29 միլիարդ դրամի:

Այս բաժնի ArmLur.am-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2025 թվականին քրեակատարողական համակարգում աճել է թե՛ ազատությունից զրկված անձանց ընդհանուր թիվը, թե՛ հիմնարկներում արձանագրված առանձին խնդիրների եւ խախտումների ծավալը:

Հաղորդման համաձայն՝ 2025 թվականի ընթացքում պատիժների եւ հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության շրջանակում դատախազների կողմից հայտնաբերվել է 167 խախտում, մինչդեռ 2024 թվականին այդ թիվը եղել է 323: Միաժամանակ, ըստ նույն բաժնի, քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց ընդհանուր թիվը 2025-ին հասել է 2396-ի, 2024-ի 1850-ի դիմաց: Այսինքն՝ մեկ տարում համակարգում արձանագրվել է զգալի աճ:

Փաստաթղթում նշվում է, որ 2025-ին ՔԿՀ-ներում գտնվող անձանցից 680-ը պահվել է փակ լոկալ գոտում, 170-ը՝ պատժախցում, 1229-ը՝ խցերից մեկի կարգով փոխադրվել, 61-ը՝ դատարանի դահլիճից, 11-ը՝ հիվանդության պատճառով, իսկ 234 դեպքում կանչի տակ գտնվող անձանց նկատմամբ իրականացվել է կալանավորում: Հաղորդման այս հատվածը ցույց է տալիս, որ պատժի եւ հարկադրանքի միջոցների կիրառության շրջանակը միայն վիճակագրական աճ չէ, այլ նաեւ ավելի բարդ գործնական ծանրաբեռնվածություն:

Դատախազությունը հատկապես առանձնացնում է ձերբակալված եւ կալանավորված անձանց պահման պայմանները: Փաստաթղթում նշվում է, որ «2025 թվականի ընթացքում ազատությունից զրկված անձանց նկատմամբ կատարված խախտումների թիվն աճել է», իսկ ազատազրկման պայմանների հետ կապված հարցերը շարունակում են մնալ ուշադրության կենտրոնում:

Կարեւոր արձանագրումներից մեկն առնչվում է հենց ՔԿՀ-ների ներսում արձանագրված միջադեպերին: Տվյալների համաձայն՝ 2025-ին արձանագրվել է 183 անձի կողմից ինքնավնասում կամ ինքնասպանության փորձ, մինչդեռ 2024-ին այդ ցուցանիշը կազմել է 205: Չնայած այստեղ առկա է նվազում, հաղորդումն ընդգծում է, որ խնդիրը շարունակում է մնալ զգայուն, հատկապես հաշվի առնելով հիմնարկներում հոգեբանական եւ սոցիալական միջավայրի բարդությունը:

Մյուս կողմից՝ աճել է դատախազական արձագանքի ծավալը: Ներկայացված տվյալներով՝ դատախազական հսկողության շրջանակում ուսումնասիրվել է 5366 որոշման համապատասխանություն օրենքին, որոնցից հազարավոր դեպքերում վերաբերել են կարգապահական տույժերին, խրախուսման միջոցներին, պահման պայմաններին եւ այլ հարցերի: Փաստաթղթում նշվում է նաեւ, որ արձանագրված խախտումների առթիվ կազմվել է 69 միջնորդագիր, որոնց ուսումնասիրությամբ մի շարք խախտումներ վերացվել կամ շտկվել են:

Հաղորդման հետաքրքիր հատվածներից մեկը վերաբերում է առողջապահական եւ ֆինանսական բեռին: Նշվում է, որ ազատությունից զրկված անձանց դատապարտյալների բուժման ու պահպանման հետ կապված պետական ծախսերը 2025-ին կազմել են 2.293.906.235 դրամ, մինչդեռ 2024-ին դրանք եղել են 1.264.407.752 դրամ: Այսինքն՝ ծախսերն աճել են ավելի քան մեկ միլիարդ դրամով: Սա համակարգի ծանրաբեռնվածության եւ ազատազրկման ինստիտուտի վրա ընկնող ռեսուրսային ճնշման մասին կարեւոր ցուցիչ է:

Առանձնահատուկ ուշադրության է արժանանում նաեւ կանանց եւ անչափահասների մասով վիճակագրությունը: Հաղորդման մեջ նշվում է, որ կանանց քրեակատարողական հիմնարկներում առկա են հատուկ ռեժիմներ ու առանձնահատկություններ, սակայն խնդիրների մի մասը մնում է նույնը՝ պահման պայմաններ, առողջապահական հասանելիություն, սոցիալական կապերի պահպանում եւ իրավական կարգավիճակին առնչվող հարցեր:

Փաստաթղթի ամենաուշագրավ ձեւակերպումներից մեկն այն է, որ «կատարված ուսումնասիրության արդյունքում արձանագրված խախտումների վերաբերյալ ներկայացվել են միջնորդագրեր»: Սա նշանակում է, որ դատախազությունը բաժինը ներկայացնում է ոչ միայն որպես վիճակագրական հաշվետվություն, այլ նաեւ որպես վերահսկողական միջամտության գործիք:

Միեւնույն ժամանակ, հաղորդման մեջ բաց տեքստով արձանագրվում է, որ որոշ խնդիրներ շարունակում են կրկնվել: Մասնավորապես նշվում է, որ «ազատությունից զրկված անձանց նկատմամբ կիրառված միջոցների օրինականության հսկողության ընթացքում արձանագրվել են խախտումներ», ինչը վկայում է՝ համակարգում դեռ պահպանվում են ոչ միայն գործնական, այլ նաեւ կառավարչական եւ իրավակիրառական թերություններ:

Դատախազության տարեկան հաղորդման այս բաժնից ընդհանուր պատկերը հետեւյալն է՝ 2025-ին քրեակատարողական համակարգը գործել է ավելի մեծ ծանրաբեռնվածության պայմաններում, ավելացել են ազատությունից զրկված անձանց թիվն ու պետական ծախսերը, իսկ վերահսկողության ընթացքում արձանագրված խնդիրները շարունակել են մնալ օրակարգում: Միաժամանակ, վիճակագրությունը ցույց է տալիս, որ որոշ ուղղություններով համակարգը փորձում է արձագանքել միջնորդագրերով, ստուգումներով եւ օրինականության վերահսկողությամբ, սակայն խնդիրները դեռեւս ամբողջությամբ լուծված չեն:

Այս բաժնից ստացվող ընդհանուր տպավորությունը այն է, որ թեման բավական սուր է, բայց ավելի շատ՝ կառավարման, վերահսկողության եւ համակարգային ծանրաբեռնվածության տեսանկյունից, ոչ թե միայն մեկ աղմկոտ խախտման պատճառով: Սրությունը երեք աղբյուր ունի.

Առաջինը՝ անձանց թվի կտրուկ աճը:

Երկրորդը՝ ծախսերի զգալի մեծացումը:

Երրորդը՝ խախտումների, միջնորդագրերի, ինքնավնասումների եւ պատժամիջոցների կիրառման շարունակվող բարձր մակարդակը:

Այսինքն՝ համակարգը ծանրաբեռնվել է, վերահսկողությունը ակտիվացել է, բայց խնդիրները չեն վերացել:

ԻՆՉ Է ԱՌԱՋԱՐԿՈՒՄ

ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանը գրում է. «Մարդը չպետք է ընտրի դեղի եւ սննդի միջեւ:

Ինչպես գիտեք, մեր կուսակցությունն ընտրությունների է գնում «Առաջարկ Հայաստանին» ծրագրով, որտեղ ներկայացված են մեր երկրի կյանքին վերաբերող կարեւորագույն խնդիրներն ու դրանց լուծման մեր առաջարկները: Խնդիրներից մեկն էլ առողջապահությունն է, որի շուրջ վերջին ամիսներին խոսակցություններն ակտիվացել են՝ ապահովագրության համընդհանուր համակարգի ներդրմամբ:

Իմ սկզբունքային մոտեցումն է. առողջապահության ապահովագրությունը կարեւորագույն համակարգ է, եւ այն անպայման պետք է գործի, սակայն բարեփոխումները պետք է արվեն մտածված, խնամքով, չլինեն բուժաշխատողների եկամտի հաշվին, բուժաշխատողների առողջության հաշվին, բուժաշխատողների բարեկեցության հաշվին:

Բժիշկների եւ բուժաշխատողների համար պետք է ապահովել արժանապատիվ, իրենց աշխատանքային ծանրաբեռնվածությանը համարժեք աշխատավարձ: Առողջապահության ապահովագրությունը պետք է ապահովության զգացում տա թեԲ հիվանդներին, թեԲ բուժաշխատողներին:

Մենք առաջարկում ենք ապահովագրման այնպիսի համակարգ, որը երաշխիքներ կտա մեր քաղաքացիներին ամբողջ կյանքի ընթացքում, ոչ թե կլինի նախընտրական ակցիա՝ ծրագրի ֆինանսավորման անհասկանալի մեխանիզմներով:

Մենք առաջարկում ենք այնպիսի ապահովագրման համակարգ, որը չի բերում անվերջանալի հերթերի ու քաշքշուկի: Համընդհանուր առողջապահական ապահովագրությունը պիտի ուղեկցվի ենթակառուցվածքային ներդրումներով: Բուժհիմնարկների վերազինումը, արդիականացումը, շենքային պայմանների բարելավումը հատկապես մարզերում կարեւորագույն խնդիր են, որը պետությունը մասնավորի հետ պետք է լուծի: Պետությունը պարտավոր է քաղաքացուն դեղերի շուկայում պաշտպանել այնպես, ինչպես պաշտպանում է էներգետիկ կամ սննդի անվտանգության ոլորտում: Մարդը չպետք է ընտրի դեղի եւ սննդի միջեւ: Առողջությունը չպիտի զոհ գնա շուկային կամ մենաշնորհներին: Սա իշխանությունների քաղաքական եւ մարդկային պարտավորությունն է»:

● *Անցած 2 օրում գրանցվել է 21 ավտովթար. 33 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՆԳԱՄ

ՊԱՐՏՎԵՑ

Վերլուծաբան Տիգրան Դումիկյանը գրում է. «Իշխանությունը նորից պարտվեց:

Ցանկացած իրեն հարգող իշխանություն, եթե ձախողում է պետական նշանակության հարցերում, սովորաբար հեռանում է: Այդ մասին վկայում է միջազգային փորձը: Իսկ առավել եւս՝ պատերազմում պարտված իշխանությունը պետք է հնարավորինս արագ գնա այդ քայլին, քանի որ պարտված իշխանության հետ գրեթե անհնար է կրկին հասնել հաղթանակի: Խոսքը ոչ թե ռազմական, այլ ռազմավարական հարցերին է վերաբերում:

Օրվա իշխանության հայտարարությունները, թե խաղաղությունն արդեն «կայացած փաստ» է, զուրկ են իրական հիմքերից: Հայաստան-Ադրբեջան հարաբերություններում ոչ միայն բացակայում է վերջնական ստորագրված փաստաթուղթը, այլեւ ակնհայտ է, որ Բաքուն շարունակում է թելադրել սեփական պայմանները:

Հետեւաբար՝ գործող իշխանությանը ձեռնտու չէ ներպետական կամ ներազգային դիմադրության ձեւավորումը: Այդ պատճառով հետեւողական պայքար է իրականացվում ազգային դիմադրության օջախների դեմ, եւ թիրախավորվում են գրեթե բոլոր այն անձինք, ովքեր համարձակվում են այլընտրանքային քաղաքական օրակարգ ձեւավորել:

Պատահական չէր նաեւ օրեր առաջ ազգային բարերար եւ «Ուժեղ Հայաստան» քաղաքական շարժման առաջնորդ Սամվել Կարապետյանի տնային կալանքի ժամկետի երկարաձգումը: Իշխանությունը լավ գիտակցում է, որ իր քաղաքական օրակարգը սպառված է: Գրեթե բոլոր սոցիոլոգիական հարցումները վկայում են, որ թե՛ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, թե՛ նրա գլխավորած քաղաքական ուժը ունեն շատ ցածր վարկանիշ:

Սամվել Կարապետյանի նկատմամբ այս ակնհայտորեն քաղաքական բնույթ կրող որոշումը եւս մեկ անգամ ի ցույց դրեց իշխող վերնախավի իրական մտավախությունները: Սակայն թե՛ Հայաստանի, թե՛ միջազգային ընտրական փորձը ցույց է տալիս, որ քաղաքական մրցակիցների մեկուսացումը չեն կարող էականորեն փոխել հանրային տրամադրությունները: Հակառակը՝ դրանք հաճախ ավելի են մոբիլիզացնում հասարակությանը, խթանում քաղաքացիական ակտիվությունը, ավելացնում հանրային աջակցությունն ընդդիմադիր բեւեռին, տվյալ դեպքում՝ «Ուժեղ Հայաստան» դաշինքին:

Հետեւապես, Սամվել Կարապետյանի կալանքի ժամկետի երկարաձգման որոշմամբ իշխանությունը հերթական անգամ վերահաստատեց իր պարտությունը:

Միեւնույն ժամանակ, շրջանառվող այն թեզերը, թե «պետք է բոլորին դեմ քվեարկել» կամ «ընտրություններով Հայաստանում հնարավոր չէ փոփոխության հասնել», ընդամենը մանիպուլյացիաներ են՝ ուղղված գործող վարչակարգին աջակցելուն: Սոցիոլոգիական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, ընտրողների բարձր մասնակցության դեպքում, գործող իշխանության վերարտադրությունը գործնականում անհնար է:

Ուստի վերջնական որոշումը, ամեն դեպքում, պատկանում է ՀՀ քաղաքացուն, քանի որ ընտրություններին գիտակցված եւ ակտիվ մասնակցությունն է լինելու այն հիմնական գործոնը, որն ապահովելու է իրական փոփոխություն»: *(Գ)*

Հայտարարություն

Կորել է Հասմիկ Արամի Ստեփանյանի (հասցե՝ Արմավիր Վաղարշապատ Արագած 5-րդ փողոց 7-րդ տուն)՝ «Ֆիզիկական կուլտուրա»-ի ինստիտուտի կողմից տրված ավարտական դիպլոմը:

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ

ԸՆԴԼԱՅՆՈՒՄ Է ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տուրիստական սեզոնին ընդառաջ՝ ՎՏԲ-Հայաստան Բանկն ուժեղացնում է իր էկվայրինգային ենթակառուցվածքը՝ ընդլայնելով ցանցը եւ ներդնելով թվայնացված վճարային լուծումներ: Սա հնարավորություն է տալիս վճարել գնումների համար առավել արագ եւ հարմար, այդ թվում՝ ինտերնետ միջավայրում: Բանկի POS-տերմինալների ցանցն ընդգրկում է զբոսաշրջային ոլորտի հիմնական օբյեկտները՝ ապահովելով օպերատիվ եւ հարմարավետ վճարումներ:

Ռուսաստանից այցելուների թվի աճի ֆոնին՝ ՎՏԲ-Հայաստան Բանկն ընդլայնում է անկանխիկ վճարումների հնարավորությունները՝ դարձնելով երկրի տարածքում վճարման գործընթացն առավել հարմարավետ: Բանկը շարունակում է մնալ տեղական շուկայում միակը, որն ընդունում է «МИР» վճարային համակարգի քարտեր: Սա հնարավորություն է տալիս զբոսաշրջիկներին առանց կանխիկի օգտագործման վճարել հյուրանոցներում, ռեստորաններում, խանութներում,բժշկական հաստատություններում եւ սպասարկման կետերում: Բացի այդ, Բանկի բոլոր մասնաճյուղերում տեղադրված են POS-տերմինալներ, որոնց միջոցով «МИР»-ի քարտապանները կարող են կանխիկացնել գումարներ ավելի շահավետ փոխարժեքով:

Տուրիզմի զարգացումը շարունակում է մնալ Հայաստանի տնտեսական աճին նպաստող հիմնական գործոններից մեկը: Վերջին տարվա արդյունքներով՝ երկիր այցելել է ավելի քան 2 միլիոն զբոսաշրջիկ, որոնցից ավելի քան 40%-ը Ռուսաստանի քաղաքացիներ են: Ընդհանուր զբոսաշրջային հոսքն աճել է 2.5%-ով, ինչը վկայում է որպես զբոսաշրջային ուղղություն Հայաստանի նկատմամբ կայուն հետաքրքրության մասին:

Անկանխիկ վճարումների ենթակառուցվածքի ընդլայնումը նպաստում է ծառայությունների որակի բարձրացմանը եւ աջակցում է զբոսաշրջության ոլորտի հետագա զարգացմանը: Բանկի POS-տերմինալների ցանցը շարունակում է ակտիվորեն աճել. վերջին տարվա ընթացքում գործող տերմինալների թիվն ավելացել է 76%-ով՝ հատկապես առեւտրի, ռեստորանային եւ հյուրանոցային բիզնեսի ոլորտներում: Զուգահեռ Բանկը զարգացնում է նաեւ Ինտերնետ-էկվայրինգը. միացված սարքերի քանակն աճել է 117%-ով, ինչն արտացոլում է օնլայն վճարումների նկատմամբ աճող պահանջարկը:

«Տուրիզմի աճն անմիջականորեն ազդում է վճարային ենթակառուցվածքի պահանջների վրա. բիզնեսի համար կարեւոր է առաջարկել հաճախորդների համար սովորական վճարման եղանակներ: Մենք զարգացնում ենք էկվայրինգը որպես գործիք, որն օգնում է արդյունավետ սպասարկել հաճախորդների աճող հոսքը: Էկվայրինգը բիզնեսին օգնում է ավելացնել վաճառքները, ինչը դրական ազդեցություն ունի թե՛ հաճախորդների, թե՛ Հայաստանի տնտեսության վրա: 2026թ. մեր ծրագրերում նախատեսված է նոր էկվայրինգային պրոդուկտների գործարկում՝ հաշվի առնելով մեր հաճախորդների առանձնահատկությունները, ինտեգրացիաների զարգացումը եւ սակագների հետագա օպտիմալացումը», - նշել է ՎՏԲ-Հայաստան Բանկի Գլխավոր տնօրենի - Տնօրինության նախագահի տեղակալ Եվգենի Մոտովիլովը:

Այս փուլում հատուկ ուշադրություն է դարձվում Ինտերնետ-էկվայրինգի զարգացմանը: Բանկը ներդնում է օնլայն բիզնեսի համար նախատեսված լուծումներ՝ կայքում վիրտուալ վճարային համակարգ (V-POS) եւ վճարումների կատարում հղումով (E-com): Սա բիզնեսներին հնարավորություն է տալիս ընդլայնել վաճառքի ուղիները եւ պարզեցնել վճարումների ընդունման գործընթացը: Օգտատերերի համար այս լուծումներն ապահովում են ծառայությունների դիմաց նախապես վճարելու հնարավորություն, այդ թվում՝ հյուրանոցների ամրագրում «МИР» քարտերով՝ դարձնելով ուղեւորությունների պլանավորումն ավելի հարմարավետ:

ՎՏԲ-Հայաստան Բանկը
վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

CONVERSE MOBILE-Ը ԹԱՐՄԱՑՎԵԼ Է

Կոնվերս Բանկը հայտարարում է Converse Mobile հավելվածի հերթական թարմացման մասին: Թարմացումը կատարվել է՝ հաշվի առնելով հաճախորդների առաջարկները եւ թվային բանկինգի զարգացող միտումները: Շեշտը դրվել է արագության, պարզության եւ վերահսկելիության վրա:

Փոփոխություններ, որոնք կզգաք ամեն օր

Թարմացումից հետո քարտերով գործարքների պատմությունը հասանելի է նաեւ «Քարտեր» բաժնում՝ մեկ էջում, ավելի ընդլայնված տեղեկատվությամբ. պետք է պարզապես ընտրել համապատասխան քարտը, ապա սեղմել «Պատմություն»: Այստեղ ցուցադրվում են գործարքներն իրենց կարգավիճակներով. հաշվառված գործարքների դեպքում հնարավոր է տեսնել գործարքի բոլոր մանրամասները, ներառյալ՝ գործարքի արժույթը եւ գումարը (եթե տարբերվում է հաշվի արժույթից) եւ հաշվեգրման ամսաթիվը:

Money box-ում խնայողությունների հնարավորություններն ընդլայնվել են՝ ներառելով նաեւ «Պարբերական վճարումները»:

Բացի այդ, համապատասխան առաջարկների դեպքում հավելվածով հասանելի կլինեն աճուրդային եղանակով տեղաբաշխվող պարտատոմսերում ներդրումները:

Սա դեռ ամենը չէ

Հայաստանում անհատականացված փորձառությամբ առաջին բանկային հավելվածի՝ Converse Mobile-ի զարգացումը շարունակական է: Ամեն թարմացումից հետո Կոնվերս Բանկի բանկինգը դառնալու է ավելի ընդգրկուն, պարզ եւ արագ. մեր հաճախորդներն արժանի են լավագույնին:

conversebank.am, 010 511 211

Կոնվերս Բանկը վերահսկվում է
ՀՀ ԿԲ կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՆԹԵՐԻ ՈՒ ԿԱՅՈՒՆ

ԿԱՐՄԻՐ ԳՈՐԳԻ ԿԱՆՈՆԸ

Հայկական կարմիր գորգը հազվադեպ է մեզ հիացնում իսկապես ոճային, համաչափասխան եւ նույնիսկ հեսաfրfիr կերպարներով: Այդ հազվադեպ բացառություններից մեկը Նազենի Հովհաննիսյանի ելույթներն են: Յուրաքանչյուր կերպար էլեգանտության մարմնավորում է՝ հստակ ուրվագծերով եւ դիզայներական անթերի մաքրությամբ:



Եւ սա նաեւ այն կերպարների մասին է, որոնք չեն մրցակցում արտաքինի հետ, այլ ընդհակառակը, ընդգծում են այն. ընդգծված գոտկատեղով զգեստներ, երկարացված ուրվագիծ, շեշտադրում ուսերի ու իրանի վրա, գործվածքի մեղմ, բայց հստակ հոսք՝ մարմնի վրայով: Սա միշտ ուղղահայացության, ձգվածության եւ վեհ կեցվածքի մասին է: Նույնիսկ ամենապարզ կտրվածք ունեցող կերպարներում կա բեմականության զգացողություն՝ ոչ վուլգար կամ ծիծաղելի, այլ դասական ու նրբաճաշակ:

Lady in red

«Անահիտ» կինոմրցանակաբաշխության կերպարը՝ այն դեպքը, երբ դասականը ոչ թե ձանձրալի է, այլ ժամանակակից ու արդիական: Առջեւից՝ մեղմ ծալքավորում, ուսերի հստակ գիծ եւ երկարացված ուրվագիծ:

Հետեւից՝ բաց մեջք, որը կերպարին տալիս է զգայականություն, բայց չի դարձնում այն բացահայտ. հստակ ողնաշարի գիծ, բարձր գոտկատեղ եւ գործվածքի նուրբ անցում դեպի թեթեւ:

Այս ամենը տեսողականորեն երկարացնում է մարմինը եւ կերպարին տալիս գրեթե քանդակային ուրվագիծ:

Այս զգեստից ուղղակի հիշեցնում է հին Հոլիվուդի տրամադրությունը՝ այն հանգիստ, բայց դրամատիկ ոճը, որտեղ ամեն ինչ կառուցված է գծերի ու գույների վրա, ոչ թե դեկորի: Այն զգացվում է Versace-ի ավելի զուսպ երեկոյան հավաքածուների կամ նույնիսկ Tom Ford-ի էսթետիկայի մեջ՝ մարմնի հետ աշխատանքի եւ զսպված սեքսուալության նույն մոտեցմամբ:

Liquid gold

«Խազեր» մրցանակաբաշխության ժամանակ Նազենին ներկայացավ մի կերպարով, որը կառուցված էր մեղմ ոսկեգույն երանգի վրա: Այն չի կուրացնում եւ չի փորձում ամբողջ ուշադրությունը իր վրա վերցնել. հակառակը՝ գործում է հանգիստ, ստեղծում է խորություն եւ նուրբ փայլ:

Գործվածքը որսում է լույսը եւ շարժվում է դրա հետ միասին, ինչի շնորհիվ նույնիսկ պարզ ուրվագիծը չի թվում անշարժ կամ ձանձրալի: Այստեղ ուշադրության կենտրոնում ոչ թե բարդ կտրվածքն ու մանրամասներն են, այլ հենց նյութի գեղեցկությունն ու հյուսվածքը:

Զգեստը բառացիորեն կենդանանում է շարժման մեջ եւ հենց դա էլ բավարար է, որպեսզի կերպարը ընկալվի ամբողջական, ներդաշնակ ու ավարտուն:

Ուրվագիծը մնում է ծանոթ՝ ընդգծված գոտկատեղով եւ երկարացված ձեւով, առանց ավելորդ դետալների: Ուշադրությունը չի ցրվում. կերպարը միանգամից ընկալվում է ամբողջական տեսքով:

Տրամադրությամբ այն որոշ չափով հիշեցնում է Elie Saab-ի մոտեցումը՝ փայլի եւ երեկոյան նրբության ընկալման առումով, սակայն առանց ծանրաբեռնվածության ու բարդ շերտավորումների: Այստեղ ամեն ինչ ավելի հանգիստ է, պարզ եւ մաքուր:

Մաքուր կոդ. միագույն

Իր տարբեր կերպարներում Նազենին գրեթե միշտ հավատարիմ է մնում հետեւյալ գունային սխեմային՝ սեւ, կարմիր, նյուդ կամ ոսկեգույն: Առանց նախշերի եւ բարդ համադրությունների, որոնք կարող էին խաթարել ուրվագիծը:

Սա կերպարը դարձնում է անմիջապես ընթեռնելի: Գույնը չի շեղում եւ չի հակադրվում ձեւին, այլ հակառակը՝ ընդգծում է այն: Աչքը չի կանգնում ավելորդ մանրամասների վրա՝ ամեն ինչ թվում է հավաքված, պարզ ու հստակ ընկալելի:

Տեսախցիկի առաջ նման լուծումները գրեթե միշտ ավելի «թանկ» ու նրբաճաշակ են թվում հենց իրենց պարզության շնորհիվ: Ստեղծվում է ամբողջական պատկեր, երբ ուշադրությունը կենտրոնացած է ոչ թե մանրամասների, այլ գծերի ու կերպարի վրա: Այս մոտեցումը որոշ չափով հիշեցնում է Saint Laurent-ի էսթետիկան՝ նույն պարզությունն ու հստակ ոճային լեզուն, բայց ավելի մեղմ եւ հանգիստ տարբերակով:

Նման նորաձեւ ռազմավարությունը տալիս է կայուն արդյունք եւ գրեթե բացառում է սխալները: Իհարկե, կա նաեւ հակառակ կողմը՝ ժամանակի ընթացքում նվազում է անսպասելիության զգացումը, իսկ հենց դա է հաճախ նորաձեւությունը դարձնում իսկապես հետաքրքիր եւ ազդեցիկ:

Ուրվագիծը՝ որպես սցենար

Միջոցառումների ժամանակ, լուսարձակների ներքո, Նազենին գրեթե միշտ աշխատում է նույն ուրվագծով՝ պարզապես տարբեր մոտեցումներով: Շեշտադրումը մնում է գոտկատեղի վրա, ձեւը երկարացվում է կտրվածքի շնորհիվ, իսկ բաց ուսերը կամ մեջքը կրկնվում են կերպարների մեծամասնությունում: Հենց այդ պատճառով նրա ոճը հեշտությամբ ճանաչելի է:

Նույնիսկ եթե դուք արդեն մոտավորապես պատկերացում ունեք, թե ինչպես է կառուցվելու Նազենիի հաջորդ կերպարը, դա այն չի դարձնում պակաս հաջողված: Ամեն ինչ այնքան ճշգրիտ է դասավորված, որ անակնկալների բացակայությունը չի հիասթափեցնում:

Հատկապես այն աստղերի ֆոնին, որոնք քաոսային կերպով փորձում են տարբեր ոճեր՝ ոչ միշտ մտածելով՝ արդյոք դրանք իրենց սազում են, Նազենիի մոտեցումը շատ ավելի վստահելի է թվում: Նա գրեթե միշտ տեղին եւ ներդաշնակ է երեւում ցանկացած ձեւաչափում եւ տեսախցիկի առաջ պահում է վստահ ներկայություն:

Զսպված շքեղությունն ու ընդգծված նրբագեղությունը հենց այն է, ինչ առանձնապես լավ է ընկալվում հայկական հանրության կողմից եւ հենց այդ պատճառով նրա յուրաքանչյուր կերպար մշտապես առաջացնում է հիացմունքի մեծ արձագանք:

ՀՈԼԻՎՈՒԴԸ ԾԱՓԱՀԱՐԵԼ Է

Էդի Մերֆին ստացել է Ամերիկյան կինոինստիտուտի Կյանքի նվաճումների հեղինակավոր մրցանակը, եւ այդ դահը իսկապես հուզիչ էր:

Արարողությունը տեղի է ունեցել լեգենդար Դոլբի թատրոնում, որտեղ 65-ամյա դերասանին դիմավորել են որոտալից ծափահարություններով: Երբ նա բեմ է բարձրացել, Մերֆին անցել է աստղերով լի սենյակով, այդ թվում՝ Սփայք Լին, Մարտին Լոուրենսը, Դեյվ Չապելը, Քրիս Ռոքը եւ Արսենիո Հոլը:

«Ես պարզապես ապշած եմ», - խոստովանել է Մերֆին՝ նայելով իր ընտանիքին, երեխաներին եւ գործընկերներին: «Սա հատուկ պահ է: Ես գրեթե լաց եղա... Հավանաբար լաց կլինեմ բեմից դուրս»:

Մերֆիի կարիերան տեւել է գրեթե 50 տարի՝ «Շաբաթ երեկոյան ուղիղ եթերում» նրա ակնառու ելույթից մինչեւ այնպիսի պաշտամունքային ֆիլմեր, ինչպիսիք են «Բեւեռլի Հիլզի ոստիկանը», «Գալով Ամերիկա», «Խելագար պրոֆեսորը» եւ «Շրեկ» ֆրանշիզը: Ռեժիսոր Սփայք Լին նշել է, որ Մերֆին «երկրին ստիպեց ծիծաղել եւ ավելի լավ զգալ», մինչդեռ Քրիս Ռոքը հավելել է. «Առանց քեզ մենք գոյություն չէինք ունենա»: Մարտին Լոուրենսի հետ կապված պահը հատկապես սրտառուչ էր. դերասանները, որոնք միասին նկարահանվել են «Կյանք» ֆիլմում, այժմ ազգականներ են. նրանց երեխաները ամուսնացել են 2025 թվականին: «Հիմա ես կարող եմ նրա հետ այնքան լուսանկարվել, որքան ուզեմ», - կատակել է Լոուրենսը: Ջենիֆեր Հադսոնը երեկոյան երաժշտական ներկայացումը ներկայացրել է՝ կատարելով «Երազանքի աղջիկներ» ֆիլմի երգերը, իսկ Սթիվի Ուանդերը շեշտել է. «Ծիծաղը կյանքը հնարավոր է դարձնում»: Էդին ավելին է, քան պարզապես կատակերգու»:

Երեկոն ինստիտուտի կրթական ծրագրերի համար հավաքեց ավելի քան 2.5 միլիոն դոլար, եւ Մերֆին իր ելույթն ավարտեց պարզապես. «Շնորհակալություն այս երեկոյի համար, որը ես հավերժ կհիշեմ: Ես սիրում եմ ձեզ»:

ԼՈՒՐԵՐ

ՀԵՐԹԱԿԱՆ ՍԿԱՆԴԱԼԸ

Բոյ Ջորջը հայտնվել է լուրջ վեճի կենտրոնում՝ հրապարակայնորեն պատասխանելով «Եվրատեսիլ» երգի մրցույթին իր մասնակցության քննադատներին՝ մրցույթի շուրջ քաղաքական բողոքների ֆոնին:

64-ամյա արտիստը ելույթ կունենա Սան Մարինոն ներկայացնող իտալացի երգիչ Սենհիտի հետ միասին: Սակայն նրա մասնակցությունը քննադատության ալիք է բարձրացրել մրցույթը բոյկոտելու շարունակական կոչերի պատճառով, որոնք հնչում են կազմակերպիչների կողմից Իսրայելին մրցույթից չհեռացնելու որոշումից հետո:

Մեղադրանքներին ի պատասխան՝ Բոյ Ջորջը հայտարարել է, որ «սկզբունքորեն չի հրաժարվի մասնակցել» եւ ընդգծել է, որ իր դիրքորոշումը հիմնված է անձնական համոզմունքների եւ կյանքի փորձի վրա:

«Ես շատ ընկերներ ունեմ հրեական ծագումով, որոնց ճանաչում եմ դեռահաս տարիքից: Ես չեմ պատրաստվում մեջքով շրջբել նրանց», - ասել է երգիչը՝ հավելելով, որ մարդկանց հետ իր կապերն ավելի կարեւոր են, քան քաղաքական վեճերը: Նա նաեւ նշել է, որ «իրեն քաղաքականապես ներգրավված չի համարում այս հարցերում», եւ որ երաժշտության գլխավոր նպատակը մարդկանց միավորելն է, այլ ոչ թե բաժանելը: Մրցույթի շուրջ իրավիճակը սրվել է այն բանից հետո, երբ մի քանի երկրներ, այդ թվում՝ Իսպանիան, Նիդեռլանդները, Իռլանդիան եւ Սլովենիան, հայտարարել են մրցույթից մասնակի կամ լրիվ հրաժարվելու մասին՝ որպես բողոքի նշան:

Միեւնույն ժամանակ, ժամանցի ոլորտի ավելի քան հազար ներկայացուցիչներ, այդ թվում՝ Հելեն Միրենը, Միլա Կունիսը, Էմի Շումերը եւ Սելմա Բլեյրը, բաց նամակ են ստորագրել՝ Իսրայելի մասնակցությանը աջակցելու համար:

Հայտարարության մեջ ստորագրողները շեշտել են, որ մշակութային միջոցառումները պետք է մնան երկխոսության եւ միավորման, այլ ոչ թե բոյկոտների եւ քաղաքական ճնշման տարածքներ:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻՉ ՈՒ ԸՄԲԻՇ

Ալբանիայում մեկնարկելու է հունահռոմեական ոճի ըմբշամարտի Եվրոպայի առաջնությունը, իսկ մինչ այդ UWW-ն որոշել է 2025-ի լավագույններին: Ըմբշամարտի եվրոպական կոնգրեսի ընթացքում Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Արմեն Բաբալարյանը ճանաչվել է նախորդ տարվա Եվրոպայի հունահռոմեական ոճի ըմբշամարտի լավագույն մարզիչ: Իսկ 2025-ի Եվրոպայի ու Աշխարհի չեմպիոն Մալխաս Ամոյանը լավագույն հունահռոմեական ոճի ըմբիշն է, հայտնում է Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիան: ԵԱ-ում վաղվանից հանդես են գալու Մանվել Խաչատրյանը (55 կգ), Սուրեն Աղաջանյանը (60 կգ), Կարեն Ասլանյանը (63 կգ), Սլավիկ Գալստյանը (67 կգ), Գասպար Տերտերյանը (72 կգ), Մալխաս Ամոյանը (77 կգ), Սամվել Գրիգորյանը (82 կգ), Գեւորգ Թադեւոսյանը (87 կգ), Հայկ Խլոյանը (97 կգ) եւ Ալբերտ Վարդանյանը (130 կգ):

● Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում ապրիլի 22-ին՝ ժամը 19:00-ին, կկայանա «Գայանե» բալետը:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս եւ ո՞ր լեզվով է իրականացվում ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդունումն ու ուսուցումը հաստատությունում:

Անահիտ Սարգսյան, 48 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ ԿԳ նախարարի N 1640-Ն /24.11.2010թ./ հրամանով հաստատված «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու ազատելու կարգի» 5-րդ կետի համաձայն՝ «Ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդունումը հաստատություն կարող է կատարվել սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում (դասարանում), իսկ դրա բացակայության դեպքում ուսուցման լեզվի ընտրությունը կատարում է սովորողի ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը): Եթե ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում լիցենզիայով տրված սահմանային տեղերը լրացած են, եւ տվյալ բնակավայրում բացակայում է այլ հաստատությունում ազգային (մայրենի) լեզվով ուսուցման հնարավորությունը, ապա սովորողի ընդունելությունը տվյալ հաստատություն իրականացվում է՝ անկախ լիցենզիայով տրված սահմանային տեղերի սահմանափակումից»:

ԿԳՄՍ

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Քանի՞ օրում կստանամ իմ դիմումի, հարցման կամ բողոքի պատասխանը:

Արփինե Սահակյան, 29 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համատեքստում ներկայացվող՝ տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ գրավոր հարցման պատասխանը տրվում է հետեւյալ ժամկետներում.

1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.

2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.

3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը ներկայացված տեղեկատվություն տրամադրելու պահանջ չպարունակող դիմումների կամ բողոքների հիման վրա հարուցված վարչական վարույթն ավարտվում եւ վարչական ակտը կայացվում է դիմումի ներկայացման փաստով վարչական վարույթի հարուցումից հետո՝ 30-օրյա ժամկետում, բացառությամբ օրենքով նախատեսված հիմքերով վարչական վարույթի ժամկետի երկարաձգման դեպքերի:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հարկադիր կատարողի կողմից որոշակի որոշման կայացման հիմք հանդիսացող փաստական հանգամանքներ եւ/կամ ապացույցներ ներառող դիմումների ներկայացման դեպքում հարկադիր կատարողի կողմից այդ դիմումի հիման վրա համապատասխան որոշումը կայացվում է դրա համար հիմք հանդիսացող հանգամանքները հարկադիր կատարողին հայտնի դառնալու (դիմումը ստացվելու) օրվանից եռօրյա ժամկետում, եթե օրենքով ավելի կարճ ժամկետ նախատեսված չէ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Արտակարգ իրավիճակ Մայակովսկի գյուղում. գետը դուրս է եկել հունից ու մի քանի կիլոմետր լցվել փողոցներ ու տների բակեր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 + 2 + 6 + 11
Կոտայքի լեռներ	- 1 + 2 + 6 + 9
Կոտայքի նախալեռներ	+ 5 + 8 +10 + 13
Գեղարքունիք	- 2 + 2 + 5 + 8
Լոռի	+ 1 + 5 + 7 + 10
Տավուշ	+ 1 + 4 + 7 + 10
Արագածոտնի լեռներ	- 3 + 1 + 6 + 9
Արագածոտնի նախալեռներ	+ 4 + 8 + 9 + 14

Արարատ	+ 6 + 9 +13 + 16
Արմավիր	+ 8 + 10 +15 + 18
Վայոց ձորի լեռներ	0 + 2 + 5 + 8
Վայոց ձորի նախալեռներ	+ 6 + 9 +13 + 16
Սյունիքի լեռներ	0 - 2 + 3 + 6
Սյունիքի նախալեռներ	+ 2 + 5 + 7 + 10
Սյունիքի հովիտներ	+ 8 + 11 +14 + 17
Երեւան	+ 6 + 8 +13 +15

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **20.04.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*